ՀՏԴ 82.09

ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Ս.Ա.Խանյան
գրականության և ժուռնալիստիկայի ամբիոն

Հաստատված է, որ հայոց գրաքննադատության անհաս լեռնագագաթները հանդիսանում են Մ.Խորենացին, Գ. Նարեկացին, Խ. Աբովյանը, Մ. Նալբանդյանը, Հ. Թումանյանը, Ե. Չարենցը և Պ. Սևակը: Ինչպես տեսնում ենք, թվարկածս մեծությունները առաջին հերթին մատենագիր-գրողներ են: Եվ դա բնական է, քանզի համաշխարհային գրականության ընթացքը ապահովվել է մեծանուն գրողների ստեղծագործական կուտակումների, ինչպես նաև նրանց կողմից դասական և ժամանակակից գրողների երկերն արժեքավորելու և գեղարվեստական խոսքի զարգացման ու հարստացման ճիշտ ճանապարհը ցույց տալու շնորհիվ:

Ոչ ոք չի առարկի, եթե ընդգծենք, որ Հ. Թումանյանը ոչ միայն Արարատն է մեր քերթության, այլև լուսառաք բարձունքն է մեր գրաքննադատության:

Ռուս մեծ մտածող Բելինսկին բարձր է գնահատել քննադատության դերը, այն քննադատության, որն ուսումնասիրում է գեղարվեստական ստեղծագործության օրենքները: Նա ընդգծել է, որ «քննադատությունը բխում է արվեստից, բայց ինքն արվեստ չի ստեղծում»: Այստեղից էլ այն պահանջը, որ քննադատը պետք է բարձր ինտելեկտի տեր լինի, կարողանա գնահատել գեղարվեստական երկը: Քննադատը պետք է առաջնորդվի գեղագիտության հիմնական սկզբունքներով՝ լուսաբանի գրական վաստերը, կյանքը, կամ հակառակը - գրական կոնկրետ վաստերից տեսական ընդհանրացումներ կատարի: Սակայն խորհուրդ էր տալիս, որ այդ երկուսը միասին լինի: Նա սիրում էր կրկնել. «մեր քննադատությունը պետք է դառնա հասարակության դաստիարակը և պարզ լեզվով պետք է բարձր ճշմարտություններ ասի»: Նա պահանջում էր, որ քննադատը ճիշտ ըմբռնի և գնահատի գեղարվեստական ստեղծագործությունը: Իսկ դրա համար քննադատը պետք է ունենա բարձր ճաշակ, դառնա գրողի լավագույն խորհրդատուն, բացահայտի գրականության նշանակությունը արդի և գալիք կյանքի համար: «Քննադատի գործը, - գրել նա, - միայն նրանում չէ, որպեսզի գրողին հռչակի մեծ տաղանդ կամ հանճար, դա ավելի շուտ հասարակական կարծիքի, քան թե քննադատի գործն է: Քննադատի գործն է՝ վերլուծման ճանապարհով գիտակցել տալ հասարակական կարծիքը և ցույց տալ տաղանդի և հանճարի իմաստը, որոշել այն կենսական տարրը, որը նրա երկերի բացառիկ հատկությունն է, կազմում և որով նա հարստացրել է հայրենի գրականությունը և իր հասարակության կյանքը»: Սառնանշելով քննադատի ասելիքը, միաժամանակ նա գտնում էր, որ քննադատը պետք է ձգտի հասնել տաղանդավոր գրողի մակարդակին, որպեսզի իր գնահատականները և խորհուրդները ընդունվեն և նպաստեն գեղարվեստական գրականության զարգացմանը: Քննադատը արվեստ չի ստեղծում, ուստի պետք է ունենա Աստծո կողմից ընծայված առանձնահատուկ կարողություն, որպեսզի բարձր ճաշակով, լայն մտահորիզոնով, ընդունելի տեսակետով, ասկողմնակալությամբ, մաքուր խղճով, անշահախնդիր վերաբերմունքով օգնի ազգային հոգևոր արժեքների զարգացմանը:

Քննադատի նման տիպար էր Մեծն Լոռեցին: Նա նշել է. «Քննադատը ոչ բանաստեղծ կարող է ստեղծել և ոչ բանաստեղծ կարող է սպանել: Նա միայն մեկնաբանում, պարզում ու բացատրում է: Եվ վերջ ի վեջո մի քննադատ կա, որ վերջնականապես որոշում է ապրող և մեռնող գործերը, դա ժամանակն է»[1]: Իսկ Ֆիլիպոս Վարդազարյանին հղած նամակում նա նշել է. «Քննադատը թարգմանիչ է: Նա պետք է թարգմանի բանաստեղծին, և թարգմանի ոչ թե նրա բառերը, այլ նրա սիրտը: Աստծո նման սրտագետ լինի ու խորաթափանց, գտնի ամեն բանի աղբյուրն ու արմատը, որ կարողանա ճշմարիտ գնալ ու արդար գտնել»[2]: Մեր այս մտորումների առիթը ակնավոր գրող Հրանտ Մաթևոսյանի «Սպիտակ թռչի առջև» ժողովածուն է, որում ի մի են բերված նրա մի շարք ելույթները, գրախոսությունները, հոդվածները և այլ նյութեր: Գրքում քննարկված և լուսաբանված են կյանքի և գրականության վտխիարաբերության, գրականության և արվեստի յուրահատկությունների, գրողների և արվեստի գործիչների թողած ժառանգության վերարժեքավորման, ազգային-հասարակական-մշակութային կյանքի գնահատման և այլ կարևոր հիմնախնդիրներ: Եվ հենց սկզբից ընդգծենք, որ Հր. Մաթևոսյանը գեղարվեստական խոսքի և գրականագիտական հայացքների սահմաններում կանգնած է հավասար զուգահեռների վրա: Այս առումով նա սերվել է Հ. Թումանյանի, Ե. Չարենցի, և Պ. Սևակի զարմից, և նրանց հետ կազմում է մի սուրբ չորրորդություն:

«Կյանքը և գրականությունը», «Գրողը և իր աշխարհը», «Գրական-մշակութային կյանք» (գրականություն, գեղանկարչություն, կինո), «Ազգային հասարակական կյանք» բաժիններում անվանի գրողը ներկայանում է որպես խիզախ ու հասուն գրականագետ-անհատականություն:

Հետևելով 20-րդ դարի երկրորդ կեսի գրական-գեղարվեստական զարգացման ընթացքին, Հր. Մաթևոսյանը առիթը բաց չի թողել քննադատությունը ներկայացնելու որպես գեղարվեստական ստեղծագործության զարգացմանը նպաստող կարևորագույն բնագավառ: Նրա վերլուծություններն ու ընդհանրացումներն արվեստի ուղին լուսավորող դասեր են՝ նման փորձառու այն բժշկին, որ հիվանդի աչքերին նայելով, կանխորոշում է հիվանդությունը և անհրաժեշտ դեղերով նպաստում նրա առողջացմանը:

Անդրադառնալով գրողի դերին, գրականության և հասարակական կյանքի փոխհարաբերություններին, անմահ արձակագիրը թևավոր մտքերով ընդհանրացումներ է կատարում: «Գրողն ի՞նչ է անում, - հարցնում է նա և անմիջապես պատասխանում, - աշխարհն իր ուզածի պես չէ, ուզում է աշխարհը բերել իր ուզածի տեսքին»: Եվ ապա շարունակում. «Գրականությունը մարդկության կարոտն է կյանքին: Մոնումենտալացնելով՝ գրականությունը մեզ կարոտել է տալիս մեր կողքին իսկ գտնվող մարդուն, հասը երեսուն կամ հիսուն կոպեկ արժեցող շուկայի վարդը դարձնում է քնարական, - Աստծուն հավասար արարիչ է գրականությունը...»[3]:

Հր.Մաթևոսյանը գրականությունը համարում է աշխարհի ազնվանալուն ուղղված տառապալից ճիգ, որը և եղել է համաշխարհային գրականության կոչումն ի ծնե: «Ինչպես աստղագետները ծնվում են աստղության մեջ, - հաստատում է նա, - այդպես ամեն մի գրող հայտնվում է թիապարտի նստարանին»[4]: Հր. Մաթևոսյանը, սակայն չի մոռանում գրողի ակտիվ դերը հասարակական կյանքում:Նա գտնում է, որ պետք է ստեղծել այնպիսի մթնոլորտ, «որի մեջ գրողն իրեն կզգա այս երկրի տերն ու պատասխանողը, որպեսզի սպիտակ թղթի դեմ գրողը նստի ոչ թե որպես առաջադրանք կատարող աշակերտ, այլ որպես անհայտությունից գրականության ու կյանքի բարդ խնդիրներ բացահայտող ուսուցիչ»[5]: Այդպիսին հենց ինքը՝ Հր Մաթևոսյանն է՝ գրող-ուսուցիչ նաև գրականագետ-ուսուցիչ: Նրա միայն «Այսպես կոչված գյուղագրության մասին» հոդվածը բավական է, որպեսզի պարզ պատկերացնենք, թե բանավիճային դիմադրողականության և ոճի, երևույթների ընկալման և եզրահանգումների ինչպիսի կարողության և խոհեմության շերտեր ունի նա: Վ. Պետրոսյանն էր սկսել բանավեճը: Նա որոշակի մտահոգությամբ գրել էր. «Ես ինչպե՞ս իրար գումարեմ ֆիզիկոս Ալիխանյանին, լեռնագործ Աշոտ Սեյրանյանին, մեր գյուղացի Աթանես պապին, երաժիշտ Առնո Բաբաջանյանին, օդաչու Էդիկ Բախչինյանին, գրող Պերճ Զեյթունցյանին, գրող Հրանտ Մաթևոսյանին: Եվ ինչպե՞ս գումարեմ, ինչի՞ վրա բաժանեմ, որ քանորդում ստացվի այսօրվա հայի միջին ազգային կերպար»: Հր. Մաթևոսյանը նման հարցադրումը համարում է ոչ լուրջ, ոչ գրական և բացատրում. «Գրականությունը գրողական եսի արտածումն է, և եթե դու մարդ ես, գրող ես, քսաներորդ դարի երկրորդ կեսի հայ գրող ես, եթե խսկապես գրող ես. կամ քո գրվածքները ցողված են ամենաչնչին իսկ անկեղծությամբ, ապա չի կարող պատահել, որ քո ծնած մարդիկ լինեն տասնյոթերորդ դարի շվեդներ: Իսկ եթե գրող չես, ապա գումարիր ու բաժանիր բոլոր ֆիզիկոսներին, հովիվներին ու հանքափորներին, քանորդում ստացիր քսաներորդ դարի հայ գրականության երկրորդ կեսը ճշգրտորեն արտացոլող մի ֆիզիկոս-հովիվ, բայց դա չի լինի մարդ, այլ կլինի գումարում, բաժանում և քանորդի պատասխան»[6]:

Վ.Պետրոսյանը հանդես էր եկել իբրև թե ի հակակշիռ հնաբույր գրականության: Հր. Մաթևոսյանը սակայն նկատել է, որ ի հեճուկս հնաբույր գրականության թերությունների, ստեղծվում է մի նոր թերի գրականություն:

Բանն այն էր, որ և՛ Վ. Պետրոսյանը, և՛ Գ. Արշակյանը վկայակոչելով ուրբանիստական կենցաղի հայաստանյան արգումենտը, մոռանում էին մի շատ կարևոր պահանջ, որն ըստ Հր. Մաթևոսյանի, այն է, որ «ամեն մի կարգին գրողի ստեղծագործությունն այդ գրողի աշխարհայացքի ու փիլիսոփայության իրացումն է, գրողը դեպքեր շարադրող չէ, այլ աշխարհի յուրովի բացատրող կամ բացատրել փորձող»[7]:

Հայոց գրականության և գրականագիտության պատմության մեջ Հր. Մաթևոսյանն առաջինն է, որ սպառիչ պատասխան է տվել գյուղագիր և գյուղագրություն ծամծմված արտահայտությանը: Նա չի ընդունում գրողներին ըստ արծարծած թեմաների դասակարգելու և գնահատելու երևույթը, ընդգծելով գրականության գլխավոր առարկայի՝ հասարակական մարդու կերպարի ստեղծման առաջնահերթ խնդիրը: Մաթևոսյանն առարկում է Պետրոսյանի և Արշակյանի այն դրույթի դեմ, թե գյուղագրությամբ զբաղվողները *հնիստորներ* են, իսկ քաղաքագրությամբ զբաղվողները՝ որոնող վարպետներ: Մաթևոսյանը հասկացնում է, որ Պետրոսյանը և Արշակյանը բոլորովին անտեսում են գրական ոճը: Այստեղ ընդգծվում է ավանդույթի և նորարարության սերտ կապը, միաժամանակ նշվում, որ յուրաքանչյուր գրող գրասեղանի մոտ նստում է մեն-մենակ, դժվար է յուրաքանչյուր գրողի գործ: Հր. Մաթևոսյանը շեշտում է, որ ստեղծագործելիս Բակունցը չի օգնում ոչ մի գրողի, իսկ եթե օգնում է որևէ գյուղագրի, կարող է օգնել նաև քաղաքագիրների, որովհետև ինչպես բացատրում է Մաթևոսյանը. «ոչ գյուղն ու քաղաքն են սոցիալական հակադիր բևեռներ, ոչ գյուղացին ու քաղաքացին են մարդկայնորեն հակադիր դրսակներ, ոչ էլ ժամանակներն են դատարկվում իրենց բովանդակությունից ու լցվում նոր բովանդակությամբ այնքան արագ, որ հնանոր սերունդը

չհասկանար նախորդ սերնդին, և գրականությունն էլ դեռևս մնում է իր հին մարդագրության կոչման բարձունքներին»[8]: Նա գտնում է, որ կյանքի հավերժական ճանապարհին գրականության բնապաշտական թեքումը շարունակվում է և խորհուրդ է տալիս չմոռանալ, որ արվեստը միշտ էլ խրված է մարդասիրության հողում, որ կարիք չկա քաղաքակրթության անունից սպառնալ գյուղագրությանը, որ գյուղագրությունը քաղաքակրթության ծնունդ է, որ գյուղագրությունը քաղաքակրթությունն է: Վերջնականապես Հր. Մաթևոսյանն ընդհանրացնում է. «Չկա գյուղագրություն կամ քաղաքագրություն, կա միայն մարդկային հայացք բնությանն ու աշխարհին»[9]:

Ռուս մեծանուն գրող Լև Տոլստոյը ժամանակին նկատել է, որ գրողի հանճարը ձևավորվում է այն դեպքում, երբ նա խիզախում է՝ ժողովրդի շահերը պաշտպանելու համար: Գրողի մասին նույն կարծիքն ուներ նաև Ա.Պ. Չեխովը: Մի առիթով Հր. Մաթևոսյանը խոստովանել է, որ ինքը շարունակել է այնտեղից, որտեղ կանգ է առել Չեխովը: Այս խոստովանությունը ապացուցվում է ոչ միայն Մաթևոսյանի արձակով, այլև այնպիսի հոդվածներում, ինչպիսիք են «Ստիլիզացիայի մասին», «Բանի աշխարհը», «Գրականությունը մասին չէ», «Ես ես եմ» և այլն: «Ես ես եմ» հոդվածում խոսելով սովետական ամբողջատիրության մասին, անվանի գրողը իրեն հատուկ իմաստունությամբ բնութագրել է նաև այդ տարիների մթնոլորտը գրական ընթացքի մեջ, երբ ամեն մի համարձակ խոսք ընդունվում էր սվիններով, իսկ ճշմարիտ խոսք ասողին, ինչպիսին ինքն է եղել, վկան նրա «Անհնձոր»-ը, վիրավորելու չափ քաշքշում էին դես ու դեն: «Մեղքը մի քիչ էլ միջավայրինն էր, - գրում է նա, -գրաքննադատությունը և գրչեղբայրները, ովքեր ամենայն լրջությամբ գրում էին բաներ, որ մեր կյանքի հետ ոչ մի կապ չունեին՝ ժամանակով և տարածությամբ հեռու, հաճախ նաև մեկ անգամ արդեն գրված բաների մասին»[10]: Մաթևոսյանը գրում է, որ ժողովրդին չի կարելի դիմազրկել, չի կարելի ժողովրդից խլել լինելության նախաձեռնությունը, սեփական բարոյականությունից զուրկ համարել ժողովրդին և կանգնել նրա գլխին, որպես թե մարգարեի քո առաքելությամբ:

Գնահատելով խորհրդային տարիներին ստեղծած հայոց գեղարվեստական խոսքը, Հր. Մաթևոսյանը նշում է, որ ամբողջատիրության ու դիկտատի շրջանում այնուամենայնիվ ընդդիմադիր գրականություն մեզանում ինչ-որ չափով ստեղծվել է: Սակայն նա վերհիշում է, որ իր սերունդը խավարի մեջ շողք էր համարում Արևմուտքի գրականությունը և առաջ քաշում ազգային բարձրարվեստ գրականություն ունենալու խնդիրը: Նա խորհրդածում է. «Իրար օգնելով պիտի շատացնեինք ու բարձրացնեինք մեր գրականությունը, կինոն, որ վերջապես մեկը կարողանար դառնալ բոլորի խոսքը, ինչպես որ Թումանյանը դարձավ ժողովրդի խոսքը»[11]:

Որպես տաղանդաշատ արվեստագետ Հր. Մաթևոսյանը քննարկում է նաև բառի գեղագիտության հիմնախնդիրը: Նա գրել է. «Ամենից անհրաժեշտ բառերը պիտի գրես: Տարածության մեջ քեզ փակիր, քիչ ասա, ժամանակին լռիր, պաուզայի զգացողություն ունեցիր»[12]:

Հր.Մաթևոսյանը կյանքի և գրականության փոխփոխվայության հզոր գիտակ է: Նա գտնում է, որ ժողովուրդները ի սկզբանե ունեն մի անօտարելի պատվախնդրություն, որ իրենք ամոթ չմնան, որ իրենք իրենց պատկեն մշակույթով: Այդ ընդհանուր տիեզերական ձգտումի մեջ նաև մենք ենք: Սակայն պետք է արարել, դրա համար գոյություն ունի լեզուն, որի զգացողությամբ խորհրդածում է Մաթևոսյանը. «Լեզուն պետք է չլռի, լեզուն պետք է գեղարվեստանա, մի բան դառնա, որպեսզի ուրիշ լեզուների մեջ կարողանա բլբլալ, խոսել, ասել, իմաստավորել: Ժամանակը նույնպես էդ պատվախնդրությունը ունի»[13]: Նա խրախուսում է, որ աշխարհում երևալու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել խոսքին, թատրոնին, գրքին: Նա նկատում է, որ ամբողջ աշխարհում մշակույթը կանգնած է ծանր վիճակում: Արվեստագետը պետք է մոտ լինի իրականությանը, քանզի իրականությունը մեծ արվեստ է: Արվեստագետը պետք է կարողանա ընդգրկել այն ողբերգական խորը, մեծը, համաշխարհայինը, խորքայինը, կոսմիկականը, որ իրականությունն է: Գրողի թևերը պետք է կարողանան ընդգրկել կյանքը իր ամբողջությամբ, իր խորությամբ, իր ընթացքի արագությամբ, իր հեղափոխականությամբ: Մտորումների այս հոսքի մեջ նա դիմում է իր սերնդակիցներին. «Գոնե քաջությունը ունենանք, գոնե խիզախությունը ունենանք իրականությունը տեսնել այնպես, ինչպես կա և, եթե մարգարեները չենք՝ գալիք ժամանակների, ապա գոնե մեր ժամանակների մատենագիրները լինենք: Մեր ժամանակի վավերագրողները լինելու քաջությունը ունենանք»[14]:

Հր.Մաթևոսյանը ինքնատիպության իր հետքն է թողել ոչ միայն գրական քննադատության, այլև տեսության և գրականության պատմության բնագավառներում: Նա գրական արժեքների վերագնահատության մեթոդաբանության նորոգիչ է, թարմ է նրա խոսքը հայոց այն դասականների մասին, որ, թվում է, թե ամեն ինչ արդեն ասված է: Դասականներին նա գնահատում է գրականության և կյանքի փոխադարձ կապերի բացահայտմամբ, գեղարվեստի և իրականության գեղագիտական հարաբերությամբ: Այդ են վկայում Հ. Թումանյանին, Վ. Տերյանին, Ե. Չարենցին, Ակ. Բակունցին, Ստ. Զորյանին, Գ. Մահարուն, Հ. Մնձուրուն, Վ. Սարոյանին, Հ. Սահյանին, Մ.

Մարգարյանին, Պ. Սևակին, Լև Տոլստոյին նվիրված նրա հոդվածները: Կարդալով դրանք, նախ համակվում ես Հր. Մաթևոսյան-գրողի քննադատական դավանանքով, որն աչքի է ընկնում ակնածանքի և հպարտության զգացումներով: Նրա խոսքը երևույթի գնահատման լուսարձակ է, նրբանկատության ծիվանք, գրականության գիտակի խորհուրդ ու դաս: Հ. Թումանյանի հիսունչորսամյա կյանքի մեջ նա տեսնում է հայոց ազգային կեսդարյա կյանքը և պատգամում սերունդներին. «Թումանյանից առաջ մենք ամեն ինչ ունեինք և ոչինչ չունեինք, ինչպես որ աստվածային Բանից առաջ ամեն ինչ կար և ոչինչ չկար»[15], և ապա ավելացնում. «Թումանյանով մենք կանք: Առանց Թումանյանի՝ մենք չկանք», ապա ընդհանրացնում. «Նրա ահազանգի ու արագ արձագանքի, նրա ձեռնարկումի, նրա մտքի ու եռանդի արդյունք են կրթա-գիտական, գրական-մշակութային այն հիմնարար հաստատությունները, որ մի ժողովրդի վերաճեցնում են ազգի և ազգը մղում պետականության»[16]:

Վ.Տերյանի մեծությունը Հր. Մաթևոսյանը տեսնում է հայոց լեզվին նոր երանգ հաղորդելու մեջ: «Տերյանն, այո, - ասում է նա, - հայոց լեզվին բան տվեց, և լեզուն, որ ամբողջ մշակույթի հիմքն ու հենքն է, յուրացնել սկսեց երևույթներ, որ մինչև Տերյանը միայն ուրվագծել էր զորում... իրենից հետո հայ նկարչությունն սկսեց այլ կերպ տեսնել ու նկարել, քան մինչև Տերյանն էր նկարում, իրենից հետո հայ ծարտարապետությունը սկսեց նկարել ու կառուցել այլ կերպ, քան մինչև Տերյանը, և երաժշտությունը, և բան բանալվեցավ: Այլապես հնադավանեներ կլինեին և ժամանակավրեպ կկոչվեին»[17]:

Հր. Մաթևոսյանի խոսքը գրականագիտության մեջ նորարարական է, պատկերավոր: Նա հեռու է ակադեմիական առանձին հեղաբպան նախադասություններից, միտքը ձկուն է, ոճն ինքնատիպ, խոսքն անմիջական: Նրանում և սրտի ջերմություն կա, և ժողովրդական իմաստուն դարձվածներ, թարմ ու պատկերավոր հումեմատությունեներ, փտխաբերական արտահայտություններ և այդ ամենի դյուսվածքում հասուն գրականագետի վերլուծություններ և համոզիչ գնահատականներ: Այսպես, Ե. Չարենցին ընծայված հոդվածների շարքի վերնագրերը և պատկերավոր են, և բնութագրող: Սա դրանք. «Երևանի այն զորագնդին, որի գլուխը՝ ինքն էր», «Բախտավորությունն է աշխատել այս լեզվի մեջ, որ Չարենցն է այրենացրել»: Այս հոդվածներում Չարենցը գնահատվում է որպես ճակատագիր, մաքառող, մարանչող էպոխայի հետ ժանիք ժանիքի կռվող, էպոխային վերելքի վիթեր տվող ու խոր վերլքեր առնող: Հր. Մաթևոսյանի համար Չարենցը մարտիկ ու արքա է, հայրենիքի հսկասեն կռվի ոչ մի պահը չուրացած և ոչ մի մարտը չշրջանցած, արյուն տալով գահակալ բարձունքի հասած վինվոր: Վերջապես ընդգծում է. «Չարենցի խոսքով տիրական մարդկանց արևային մի աշխատի է բացվում, անկեզծության սառույցից կապանքից ժողովրդի է ճարտարավիսում. ժողովրդի է կանգնում ժամանակի հետ խոսքի շրեղ տուրևառի երկիր է դառնում ազատների հայրենիք»[18]:

Ավ.Բակունցին բնութագրող հոդվածաշարի վերնագրերը հնչում են այսպես. «Դեռևս համագանգի արձագանքով», «Հայացք ժողովրդի ներսից», «Նրա ձգտումը վերաճում էր հաստատումի»: Դրանցում հառնում է երջանիկ-ողբերգական, գոնյաբ-հավերժական Բակունց գրողի-մտածողի-գեղագետի-քաղաքացու կերպարը: Ահա և Բակունցի դիմանկարը ըստ Մաթևոսյանի. «Հավատավոր որպես առաջին քրիստոնյաները մեսքրակրոնի հավատավոր շիտակությամբ նա պետք է իր հայրենիքի անցյալը դատեր, անցյալը վտարեր ներկայից: Բայց նրա ձգտումը վերաճում էր հաստատումի, նրա նորացումը երդում էր դառնում, նրա վանումը դառնում էր մերձեցումի հրավեր, իր երկրի ներկան նա լցնում էր անցյալով, - հենց ժխտումով»[19]:

Ինոփագրելով Ստ. Զորյանի գրական հունձքը Մաթևոսյանը եզրակացնում է. «Զորյանի ամբողջ գործից բռնակալն ու բռնակալությունը վտարված են... Կցանկանայի նրա Պատերազմը, Դաշտանար. Հանեսը, Խնձորի այգին, Պապն ու թռը, Մի կյանքի պատմությունը, Հուշերի գիրքը, «Պապ թագավորի» մեջ երթր դեպի Տարտն և վախտանը Տարտնից - ես գրած լինեի»[20]: Իսկ Գ. Սահակյանի մասին անքիծ խղճով ազդարարում է. «Նա ինքը Հայրենիքն էր»: Արևմտահայ և սփյուռքահայ գրականության ուսադրավոր ներկայացուցիչներից մեկին՝ Հ. Մնձուրուն ներկայացնում է նրա բարձրագահ-կրոնական հայրենիքի համապատկերի վրա, որն ունի «Անընդհատ, անվերջ վերադարձ»: Վ. Սարյանը Մաթևոսյանի համար մարդասիրության մեծ առաքյալ է, համայն աշխարհի նահապետը: Հ. Սահյանը Այսմորտ պատվիրակն է, սմեեայն շնչավորի հանգրվանը, որի կենարար շունչր զգացվում է ամեն պահի: Մ. Մարգարյանը հարատևող համազգացում է: Պ. Սևակը սարսափ մարդն էր, որը կոչված էր մտքերը հեղաբեկելու: Վ. Դավիթյանը, լատ Մաթևոսյանի, մտքոտ, գաղջի և պոետի իր կյանքը ճգտտարապատեռներին քաջաձանոթ հատման օրենքով վարող ճվիրյալ էր, իսկ Լև Տոլստոյը ամբողջությամբ լույս է, որ անվանում ենք խիղճ:

Հր.Մաթևոսյանի «Սպիտակ թռչի առջև» ժողովածուի տարբեր բաժիններում գրականագիտական այնպիսի դիտարկումներ և արժեքավորումներ կան, որ կրավարարեն հասկացիտարանական մի ամփոփ մատյանի՝ ուղղված բոլոր դարերին և սերունդներին:

Այդպիսին են եղել գրականության և արվեստի թռչուն՝ մեծ ստարտողներն ու արժեքավորողները, որոնց շարքում հառնել է նաև Լուսավ Անմիջոր գյուղի հուլիր Եղնատի որդի Հրանտը, որ մերն է. հայինը, նաև աշխարհինն է. հայի իմաստությամբ և պատվախնդությամբ:

Ամփոփում

Հր.Մաթևոսյանի գեղարվեստական խոսքին զուգահեռ ընդգծվում են նաև նրա գրականագիտական հոդվածները, ելույթները, զեկուցումները: Այս առումով նա իր տեղն ունի Հովհ.Թումանյանի, Ե.Չարենցի և Պ.Սևակի շարքերում:

Հետամուտ լինելով 20-րդ դարի երկրորդ կեսի գրական-գեղարվեստական զարգացման ընթացքին, Հր.Մաթևոսյանը լուսաբանել և գնահատել է գրականության և հասարակական կյանքի փոխհարաբերությունները, նշել գրողի տեղն ու դերը, քննարկել գյուղագրության արդի վիճակն ու նրա վերաարժեքավորման պահանջը՝ այն դիտելով որպես քաղաքակրթություն և անհրաժեշտ երևույթ: Անվանի գրողը նշեց, որ կյանքի հավերժական ճանապարհին գրականության բնապաշտպանական թեքումը կա և կլինի՝ որպես մասնագիտության համապատկեր:

Հր.Մաթևոսյանը գրաքննադատի իր դիրքերից խորհուրդ է տալիս գրողներին լինել խստապահանջ, համարձակ, հետևել ժողովրդի պատվախնդրությանը և ծառայել նրան: Անվանի գրողի գրականագիտական երևույթներն ու խորհուրդները մեծապես նպաստելու են մեր ապագա գրականության զարգացմանը և հարստացմանը:

Резюме

Наряду с художественным словом Гр.Матевосяна большое значение имеют и его литературоведческие статьи, выступления и доклады. В этой области он занимает свое достойное место рядом с Ов. Туманяном, Е. Чаренцом и П. Севаком.

Оставаясь верным процессу развития литературно-художественного слова второй половины XX века, Гр.Матевосян изучал и определял взаимоотношения литературы и жизни, отмечал место и роль писателя, анализировал настоящее состояние деревни и настаивал на ее переоценке, считая, что тема деревни в литературе –признак цивилизации и нужное явление.

Известный писатель отмечает, что на пути жизни описание природы имеет важное значение для отражения идеи гуманизма.

Литературоведческие выступления Гр.Матевосяна и разработанные им принципы будут, несомненно, влиять и способствовать развитию и обогащению будущей художественной литературы.

Ծանոթագրություններ

1.Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 4, 1969թ., էջ 280:
2. Նույն տեղում, էջ 376:
3.Հր. Մաթևոսյան, «Սպիտակ թղթի առջև» 2004, էջ 31:
4. Նույն տեղում, էջ 32:
5. Նույն տեղում, էջ 34:
6. Նույն տեղում, էջ 36:
7. Նույն տեղում, էջ 37:
8. Նույն տեղում, էջ 40:
9. Նույն տեղում, էջ 44:
10. Նույն տեղում, էջ 52:
11. Նույն տեղում, էջ 57:
12. Նույն տեղում, էջ 58:
13. Նույն տեղում, էջ 63:
14. Նույն տեղում, էջ 68:
15. Նույն տեղում, էջ 81:
16. Նույն տեղում, էջ 83-84:
17. Նույն տեղում, էջ 87:
18. Նույն տեղում, էջ 93-94:
19. Նույն տեղում, էջ 104:
20. Նույն տեղում, էջ 125: